Միսաք Մեծարենց

Առտվան արևի մեջ

Ահա՛ կ՚անցնի ցայգս անքուն,
մութին ծածքը կը մաշի.
ու կը կայթե կույսն այգուն
իր քողքին մեջ մըշուշի:

Անցան սայլերն ալ դանդաղ,
ու մըշակներն երգեցիկ,
ու բանվորներն ու հոտաղ՝
ճամփաներեն բալածիգ:

Ճառագայթներ խուսափուկ
լիճերուն մեջ կը խաղան,
և հանկարծ թույր մը դեղձան
կը ներկե ջուրը փափուկ:

Ու բոցեղեն լեզվակներ
կը ծըծեն մեգն համորեն,
արևին կյա՛նքն հըրեղեն,
արևին փա՛ռքն անըստվեր…:

Հոգիես ներս կը խուժե
քրքումն ալիքի նըման,
և հովիկին առտըվան

գինովությունն հաշիշե:

Լիճը բոսոր հարսնուկի,
ցորենի ծովը կանանչ,
կը հծծին տաղն անճանաչ
մըտերմասաց շըշուկի:

Ու մարմանդները ճանճկեն,
ու սարերը կապտորակ
եղկ հծծյունով մը կ՚երգեն
լույսին ոսկի պատարագ:

Տունկեր ռեհան ծաթրինի
կը ծըխեն խունկ մը վայրի,
որ կ՚ամպանա ու կ՚այրի
բուրվառին մեջ արփենի:

Հոգիես նե՜րս կը խուժե
քրքումն ալիքի նըման,
և հովիկին առտըվան
գինովությունն հաշիշե…: